


PEARLS OF ARMENIAN HERITAGE

Տօն Երեւման Խաչի - Ապրիլ 28, 2024



"Ամենափրկիչ" խաչքար, Յաղապատի Վանք, 1273 թ.

Մարիամ, մայր լոյսի, սուրբ կոյս, որ մարմնով ծնունդ տուիր Յօր լոյսին եւ արդարութեան արեգակին արեւելք եղար, հոգետր երգով քեզ, ով սրբուհի, կը մեծարենք:

Քրիստոս մեզի տուաւ իր սուրբ Խաչը՝ զօրութեան գաւազան, յաղթական զէնք որպէսզի հալածենք թշնամին: Սուրբ Խաչը գահն է Աստուծոյ Որդիին, եւ սուրբ սեղանն է, որուն վրայ գոհուեցաւ Աստուծոյ գառը՝ Քրիստոս:

Երուսաղէմի եպիսկոպոս սուրբ Կիրեղ հայրապետը Կոստանտինոս կայսրին գրած նամակի մը մէջ կը նկարագրէ թէ ինչպէս 351 թուականի մայիս ամսուն 7-ին, օրուան "շուրջ երրորդ ժամուն," այսինքն առաւօտեան ժամը 9-ի ատենները, արեւուն լոյսէն աւելի պայծառ փայլով՝ Գողգոթայէն մինչեւ Ձիթենեաց Լեռը երկարող տարածքը ծածկող մեծոյի խաչ մը երեւցաւ. րոպէական տեսիլք մըն ալ չէր, այլ տեսեց 'մէկ քանի ժամ' կ'աւելցնէ բարեպաշտ եպիսկոպոսը:

Մերօրեայ գիտական միտքունեցողին համար՝ այս բնական պարարեգակնային երեւոյթ մըն է, նման փայլատակող կայծակներուն, որ հիներուն համար շանթարծակ Արամազդի ահաւոր զէնքը կը նկատուէր եւ գուշակութիւններու տեղիք կու տար: Կիրեղ եպիսկոպոսին համար ալ սուրբ Խաչին երեւումը առիթ էր հրափրելու Կոստանտինոս կայսրը հետեւելու իր բարեպաշտ հօր հաւատքին եւ հեռանալու արիստամէտ հակումներէն, եւ ճանչնալու Քրիստոսի կատարեալ աստուածութիւնը:

Իսկ մեզի համար՝ սուրբ Խաչին Երեւման տօնը հրաւեր է բարձրացնելու մեր միտքն ու հոգին Տէր Յիսուսի յաղթական յայտնութեան եւ Գալուստին, ինչպէս ինք նկարագրած է Մատթէոս Աւետարանիչին համաձայն, "Եւ երկնքի վրայ պիտի երեւայ մարդու Որդիին նշանը, ու այդ ժամանակ (...) երկրի բոլոր ազգերը պիտի տեսնեն մարդու Որդին եկած երկնքի ամպերուն վրայ՝ զօրութեամբ եւ բազում փառքով" (Գլուխ 24, համար 30):

Տօնին նուիրուած շարականները արդէն այս իմաստն է որ կը կարդան որպէս հիմք ծառայող դէպքին.

Փրկչական Խաչը մեզի ապաւէն երեւցաւ, որպէսզի անով յաղթենք անօրէն թշնամիին, մեր հոգիին վրայ դրոշմելով կնիք քու նշանդ, ով Տէր Աստուած մեր հայրերուն: